

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՔՆԱՐՍ ԵՐԲԵՄՆ

Քընարս երբեմն, կամ յանախ, յօրինելու տեղ երգեր՝
Քարոզախօս՝ կը դառնայ. կը սըխալին բայց մարդիկ,
երբ կը կարծեն թէ այլեւս՝ ֆերթողագիր մը չե՛ս դուն.
Բանաստեղծը, ինչպէս եւ, հեղինակները տարբեր,

Գըրիչն իրենց կը թաթխեն այս բարդ կեանքի մեղանին,
երբ կ'ըստեղծեն ե՛րգ մը նոր, մեղեդի՛ մը նրբերանգ.
Անոնք կու տան աշխարհի՛ն՝ իրենց պատգա՛մը ուրոյն,
Քարո՛գ ըլլայ այդ թէ ա՛յլ՝ տարագներո՛ւ նըմանի:

Մարդիկ ունին նախընտրա՛նք, բայց ֆերթողը իսկական
Պէտք չէ՛ ըլլայ ենթակայ նախընտրանքին մարդերու,
Թէ՛ իսկ ըլլան անոնց մէջ ֆննադատներ ինքնակոչ
Եւ կամ իրա՛ւ, հասկըցող, ֆննադատներ արուեստի:

Արուեստագէտն ի վերջոյ, պէտք չէ՛ իջնէ, եւ չ'իջներ
Ընթերցողին, այլ զայն ի՛ր մակարդակի՛ն կը բերէ.
Իսկ բանաստեղծն ալ պարտի, իր զեղումով ֆնարական,
Քարոզանման թէ ըլլայ, բարձրացընել ընթերցողն,

Որքա՛ն ալ խիստ զայն դատեն, ի՛նչ ալ ըսեն անոր դէմ.
Սակարկութիւն չը կայ հոս, ո՛չ ալ փառքի որոնում,
Այլ ո՛ւժը այն որ կ'ընէ զայն ինքզինքի՛ն հետ ներդաշն,
Կը բաւէ որ բանաստեղծն ըլլայ գիրին մէջ ներկայ:

ԱՆԵԼ